

րը, Դաշնակից կառավարութիւնները ասում են .

«... Ազատագրել այն ազգերը, որոնք ենթակայ են թիւրքական արիւնտա բռնութեան եւ դուրս ձգել Եւրոպայից օտոտմանեան կայսրութիւնը, որ վճռապէս խորթ մնաց Արեւմտեան քաղաքակրթութեան» :

Այս չէ բոլորը . Դաշնակից պետութիւնները նախարարներ մէկը միւսին դերազանցելով՝ պատերազմի նպատակները աւելի յստակօրէն ճշդեցին, իդէալիզմի ոսկեհուռ ծիրանին փոստըրը հանդիսաւորապէս մռայլ Մարսի ձեռքը տուին աշխարհը եւ Հայաստանը ազատագրելու համար :

Յանուն Մեծն Բրիտանիայի Բալֆուր պահանջում է (16 մայիս, 1917 թ .) Համայնքներում արտասանած իր ճառով վերջ դնել թիւրքական տիրապետութեան ոչ-թիւրք ժողովուրդներին վրայ :

Սօնիսօն խտրական պարլամենտում խօսելով դալիք յաղթական հաշուեյարդարի վրայ յայտարարում է, թէ «չի կարող ըմբռնել այնպիսի հաշուեյարմար, որ... հանդուրժէր հայ ժողովրդի յարածուն փճացումը» :

Կլեմանսօն յայտարարում է յուլիսին 1918, թէ Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնների համար «հայ ազգը այն ժողովուրդների թուի մէջ է, որոնց վիճակը Դաշնակիցները վճռած են կարգադրել արդարութեան եւ իրաւունքի բարձր սկզբունքների համաձայն» :

Իտալական պարլամենտի 1918 թուի նոյեմբերի 26-ի նիստին, ուր հայասէր ու ազնւուհաճի Լուցատտին պահանջում էր հրապարակով ու պաշտօնապէս յայտարարել Հայաստանի ազատագրութեան որոշումը, կառավարութեան պետ՝ Օրլանդոն պատասխանում է .

«Լուցատտին կամենում է... որ անհատական իմ յանձնառութիւնը (Հայաստանի համար) յայտարարուի պարլամենտի առջեւ . ես գոհ եմ այդ պահանջի համար, այդ յանձնառութիւնը ես կը կատարեմ» :

Այս հանդիսաւոր յայտարարութիւնը պարլամենտը որոտազին ծափահարութիւններով ողջունեց :

Լոյտ-Ջորջ իրեն յատուկ պատկերաւոր ոճով յայտարարում է 1917 թուի յունիսին, թէ «թիւրքը վատ պահապան եղաւ (իր հպատակ ժողովուրդներին) եւ խնամակալութիւնը պէտք է յանձնուի աւելի կարող եւ աւելի արդար ձեռքերի... այս վերաբերում է եւ Հայաստանին, երկիր՝ որ ողողւած է թիւրք ժողովրդի ջարդած անմեղների արիւնով» :

Բազմաթիւ են այս կարգի ազդարարութիւնները զանազան ժամանակ եւ զանազան առթիւ . նրանք դադարեցին միայն այն օրուանից, երբ սկսուեցին Դաշնակիցների մէջ ներքին անհամաձայնութիւնները . ոմանք քեմալական կազմակերպւող դիմադրութեան սաղորիչ, ուրիշները՝ հակառակորդ :

Անօղւա է երկարօրէն ծանրանալ այդ պարագաների վրայ, որոնք քաջածանօթ են : Անհնարին է սակայն չի յիշատակել Լոնտոնի այն հանդիսաւոր յայտարարութիւնը, որով Դաշնակիցները ի լուր թիւրքական հանելի խժոժութեանց Հայաստանում ուխտում ու սպանում էին միահամուռ ցասումով անհատապէս պատասխանատուութեան կոչել թիւրք կառավարութեան իւրաքանչիւր անդամին Հայաստանի մարտիրոսութեան ու թափուած անմեղ արեան համար :

Պատերազմի նպատակների այս յայտարարութիւնները այնքան վճռական ու այնքան հանդիտաւոր էին, մասնաւորապէս Թիւրքիային պատժելու համար, որ թւում էր, թէ յաղթական Դաշնակիցները այս նպովւած աշխարհում վերջապէս արդարութիւն եւ իրաւունք կը հաստատեն եւ արիւնով ու ոճիրներով զանգըռւած թիւրք պետութիւնը վերջապէս կը ջընջուի աշխարհի քարտէսից՝ որպէս պատմութեան մղձաւանջ :

Ինչո՞ւ շարունակել...

Երբ 1920 թուի դեկտեմբերին թիւրքօրոյշելիկեան կօալիցիան բղկտում էր մեր հայրենիքը, եւ Հայաստանի ընդունելութեան հարցն էր դրուած Ազգ . Ընկերակցութեան առջեւ ժընէվում, առաջին մերժողական ՈՅ-ն արտասանեց պ . Բալֆուր, ապա Վիվիանի...

Ինչո՞ւ շարունակել, երբ այդ բոլորի վերջարանը 1923 թուին Լօղանում նոյն Դաշնակիցների ստորագրած հրէշաւոր ակտն է, որի